

ՏԵՂԵԿԱՆՔ

Լոռու մարզի արդյունաբերության 2011թ. հունվար-նոյեմբեր ամիսների աշխատանքների մասին

2011 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին մարզի արդյունաբերական ձեռնարկություններն ընթացիկ (գործող) գներով թողարկել են 55143.44 միլիոն դրամի արդյունաբերական արտադրանք 2010 թվականի նույն ժամանակաշրջանի 42975.37 միլիոն դրամի դիմաց կամ արտադրանքի ծավալը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ կազմել է 128.3%, ծավալի բացարձակ աճը՝ 12168.07 մլն դրամ:

Մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները 2011 թվականի հունվար-նոյեմբերին ունի այսպիսի տեսք՝

- մշակող արդյունաբերություն 46305.83 մլն դրամ, ծավալի աճը՝ 126.5% և տեսակարար կշիռը՝ 84.0%,
- հանքարդյունահանումը համապատասխանաբար՝ 6766.48 մլն դրամ, 133.9% և 12.3%,
- էլ.էներգիայի արտադրությունը՝ 2071.13 մլն դրամ, 156.2% և 3.8%:

Վերոնշյալ ցուցանիշները վերաբերվում են զուտ արտադրության ծավալներին և չեն ներառում խմելու ջրի, օդի, շոգու, էներգիայի բաշխման ու մատակարարման և աղբահանության ծառայությունների ցուցանիշները:

Ինչպես և անցած 10 ամիսներին, նոյեմբերին ևս մշակող և հանքարդյունահանման արդյունաբերության ճյուղերի արտադրական ցուցանիշների զգալի բարելավումը պայմանավորված է հիմնականում միջազգային շուկաներում մետաղի գների բարձր մակարդակով, ինչպես նաև պարենային ապրանքների գների բարձրացմամբ: Սակայն նոյեմբեր ամսին, հոկտեմբերի համեմատ (ինչպես և հոկտեմբերին սեպտեմբերին նկատմամբ) զգալի նվազել է աճի տեմպը արդյունաբերության հիմնական ճյուղերից մշակող արդյունաբերությունում՝ 0.7%-ով, հանքարդյունաբերությունում՝ 6.5%-ով: Ճիշտ է, նոյեմբեր ամսին աճի տեմպերի նման զգալի անկում, ինչպիսին կար հոկտեմբերին չի արձանագրվում:

Էներգետիկայի ճյուղում, այս տարվա 11 ամիսներին, ինչպես և նախորդ ամսին, ի շնորհիվ մի քանի ՀԵԿ-երի արտադրանքի սահմանված սակագների զգալի աճի, դրամային արտահայտությամբ առկա է աճ 692.62 մլն դրամի չափով: Այս ամսվանից արդեն մեր կողմից հաշվառվող ՓՀԵԿ-երի ցանկում ավելացել է ևս մեկը՝ Կարբի ջրհոս ՓՀԵԿ-ը, որը սկսել է շահագործվել երրորդ եռամսյակից:

Մշակող արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի թողարկված արտադրանքի ծավալներն ընթացիկ գներով ունեն հետյալ տեսքը.

		(հազ. դրամ)			
	Ճյուղի անվանումը	2011թ. հունվար-նոյեմբեր	2010թ. հունվար-նոյեմբեր	աճը (%)	2011թ 11 ամիս. տես. կշիռը մշակող արդյու.-նաբեր. մեջ (%)
1.	Քիմիական արդյունաբերություն	851,450.0	648,667.0	131.3	1.8
2.	Թեթև արդյունաբերություն	1,240,100.0	754,897.0	164.3	2.7
3.	Սննդի արդյունաբերություն	2,625,639.0	2,526,772.0	103.9	5.7
4.	Մեքենաշինություն և սարքաշինություն	1,485,895.0	1,030,400.0	144.2	3.2
5.	Փայտամշակ. և փայտ իրերի արտադր.	65,419.0	96,993.0	67.4	0.1
6.	Մետալուրգիա	39,592,304.0	31,172,444.0	127.0	85.5
7.	Այլ ճյուղեր	445,027.0	366,415.0	121.5	1.0
Ընդամենը		46,305,834.0	36,596,588.0	126.5	100.0

2011թ. 11 ամսում ևս մշակող արդյունաբերության բոլոր հիմնական ճյուղերն ունեցել են արտադրության ծավալի աճ: Նվազում է արձանագրվել միայն «փայտամշակում և փայտե իրերի արտադրություն»-ում, որտեղ ընթացիկ գներով նախորդ տարվա հունվար-նոյեմբերի համեմատ պակաս է թողարկվել 31.57 մլն դրամի արտադրանք: Հարկ է առանձին նշել «Թեթև արդյունաբերության» և «Մեքենաշինության և սարքաշինության» ճյուղերի ձեռնարկությունների մասին, որոնք 2010թ. նույն ժամանակաշրջանի համեմատ թողարկել են համապատասխանաբար 485.2 մլն և 455.5 մլն դրամի ավելի արտադրանք, կամ աճի տեմպերը կազմել են 164.3% և 144.2%: Մարզի թեթև արդյունաբերության ընկերություններն ապահովել են զգալի աճ՝ 5 հիմնական ձեռնարկությունները գտել են գործընկերներ և իրացման կայուն շուկաներ, վերջին ամիսներին սկսել է կայուն աշխատել նաև Սպիտակի «Վանուհի» ԲԲԸ-ն:

2011թ. հունվար-նոյեմբերին ևս արտադրանք չեն տվել մարզի 19 արտադրական ձեռնարկություններ: Մրանք այն ձեռնարկություններն են, որոնք դադարեցրել են արտադրական գործունեությունը տարբեր պատճառներով (լուծարում, ձեռնարկչատիրական գործունեության ոլորտի փոփոխություն, անվանավորիտում և այլն): Արտադրության ծավալները նվազեցրել են 37 ձեռնարկություն:

Մարզի արտադրանքի ընդհանուր ծավալում զգալի տեսակարար կշիռ ունեն Ալավերդու «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 71.80%, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 11.66%, «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ն՝ 2.08%, «Ձորագետ հիդրո» ՍՊԸ-ն (Ձորահեկ) 1.65%., «Վանաձոր Խիմալրում» ՓԲԸ-ն՝ 1.15%, «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ն՝ 1.14%:

Ըստ տարածաշրջանների 2011 թվականի հունվար-նոյեմբերին թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ (գործող) գներով ունի այսպիսի տեսք.

(հազ. դրամ)

Տարածաշրջանի անվանումը	2011թ. հունվար-նոյեմբեր	2010թ. հունվար-նոյեմբեր	Աճը		Տեսակարար կշիռը (%)
			Բացարձակ	(%)	
Սպիտակ	954,625.0	1,319,218.0	-364,589.0	72.4	1.73
Տաշիր	971,375.0	573,851.0	397,524.0	169.3	1.76
Գուգարք	1,484,792.0	705,249.0	779,543.0	210.5	2.69
Ստեփանավան	523,023.0	517,520.0	5,503.0	101.1	0.95
Թումանյան	46,372,357.0	36,145,061.0	10,227,296.0	128.3	84.09
Վանաձոր	4,837,265.0	3,714,475.0	1,122,790.0	130.2	8.77
Ընդամենը	55,143,441.0	42,975,374.0	12,168,067.0	128.3	100.0

2011 թվականի 11 ամսում արտադրության ծավալը նվազել է միայն Սպիտակի տարածաշրջանում, որտեղ պակաս է թողարկվել 364.59 միլիոն դրամի արտադրանք: Պատճառը՝ այս տարածաշրջանում առաջատար «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ի (այլուրի արտադրություն) արտադրության ծավալների կրճատումն է:

Ըստ տարածաշրջանների պատկերը հիմնականում նույնն է՝ գերակշռող է Թումանյանի տարածաշրջանի դերը, զգալի է Վանաձոր քաղաքի արդյունաբերության տեսակարար կշիռը:

2011 թվականի 11 ամսում համադրելի գներով մարզում թողարկված արտադրանքի ծավալը աճել է 18.9%-ով: Այս տարվա հունվար-նոյեմբերին ամիսներին մարզի արդյունաբերության ցուցանիշներն բնեղեն արտահայտությամբ ըստ 20 հիմնական արտադրատեսակների հետևյալն են՝

	Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	2011թ. նոյեմբ.	2010թ. նոյեմբ.	Բացարձակ աճը
1.	Էլեկտրաէներգիա	մլն. կվտ.ժամ	176.9	173.9	3.0
2.	Էլեկտրաշարժիչներ	հատ	3410	3113	297
3.	Ավտոգենային սարքավորումներ	հազ. հատ	87.6	69.9	17.7
4.	Տրակտորներ	հատ	3	5	-2
5.	Պղինձ՝ պղնձի խտանյութում	տոննա	2152.5	1861.5	291.0
6.	Պղինձ կոնվերտորային	տոննա	8154.3	6883.1	1271.2
7.	Պղնձի խտանյութ	տոննա	9948.8	8257.6	1691.2
8.	Մինթետիկ կորուստ	կգ.	11420.3	3113.3	8307.0
9.	Լաքաներկանյութեր	տոննա	62.4	103.6	-41.2
10.	Լվացող, մաքրող և օսլայող միջոցներ	տոննա	390.5	499.5	-109.0
11.	Շինամիս	տոննա	227.6	351.9	-124.3
12.	Ե/բետոնյան իրեր և կոնստրուկցիաներ	տոննա	4616.8	5595.6	-978.8
13.	Երեսապատման սալեր բնական քարից	տոննա	15.6	11.5	4.1
14.	Ոչ հանքային շինանյութեր	հազ. տոննա	74.50	170.87	-96.37
15.	Այլումինե մետաղապլաստ դոներ, պատուհան.	հատ	1006	1017	-11
16.	Կուրտկաներ, վերնաշապիկներ	հազ. հատ	228.8	181.2	47.6
17.	Պանիր	տոննա	499.0	386.1	112.9
18.	Արային	տոննա	3672.0	7625.0	-3953.0
19.	Հրուշակեղեն	տոննա	3742.7	7696.8	-3954.1
20.	Մակարոնեղեն	տոննա	747.3	327.6	419.7

2011թ. 11 ամսում մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված հիմնական արտադրատեսակների ծավալները՝ կոնվերտորային պղնձի, պղնձի հանքանյութի, ավտոգենային

սարքավորումների, էլեկտրաշարժիչների, սինթետիկ կորունդի, հագուստի, պանրի, բնեղեն արտահայտությամբ աճել են: Միաժամանակ, այն արտադրատեսակների ծավալները, որոնք դեռ տարվա սկզբից նվազել էին, նոյեմբերին բացասական հաշվեկշիռները նվազել են:

ԶԱՐԳՍԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Ռ.ՍԱՐԳՍՅԱՆ